ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար անվտանգության ապահովման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «21» օգոստոսի 2024թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար,

Կարեն Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-տնտեսագետ:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Անդրանիկ Աբգարյանը՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/24» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա (19.08.2024թ.)՝ ժամը 12:30-ը,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 20.08.2024թ.՝ ժամը 12:30-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնման գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց՝ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին»

ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա և գնման հայտով սահմանված է ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինն է.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Անվտանգության ապահովման սարքեր	67 500 000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
Simsom	India
«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 16, բն.53.,
«ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ	ք.Երևան, Հր. Ներսիսյան փ. ՓԿՂ./Շ/1/103 տարածք
«Կոնսէլ» ՍՊԸ	ք.Երևան, Արարատյան 90/2
ԱՁ Նարեկ Սադյան	ՀՀ, Կոտայք, Քասախ, Գ. Նժդեհ 3,40
«Էյչ Գրուպ» ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
SOFAEXPORT	Լոռու մարզ

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/24» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	Simsom	167500000	0%	167500000	3944447	0%	3944447	
1	«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ	67499999	20%	80999998.8	40000000	20%	48000000	
1	«ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ	56000000	20%	67200000	44000000	20%	52800000	
1	«Կոնսէլ» ՍՊԸ	55552500	20%	66663000	49444475	20%	59333370	
1	ԱՁ Նարեկ Սադյան	57000000	20%	68400000	54996000	20%	65995200	
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	90000000	20%	108000000	90000000	20%	108000000	Մերժված
1	SOFAEXPORT	1000000000	20%	1200000000	1000000000	20%	1200000000	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է, աճուրդն ամփոփվել է 20.08.2024թ.՝ ժամը 13:00-ին, և Համակարգի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակց է համարվել Simsom-ը:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, Համակարգում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մուտքագրման (լրացման) մասին.

7.1. Simsom-ի կողմից ներկայացված հայտում առկա է Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը, Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, բացակայում են իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը և հայտի ապահովումը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

8.Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչված Simsom-ի հայտը մերժելու մասին.

8.1. Հաշվի առնելով սույն արձանագրության 7.1. կետը՝ հանձնաժողովը որոշեց առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչված Simsom-ի հայտը մերժել՝ ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և Ընթացակարգի հրավերի 7.6 կետով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. Տեղեկատվություն՝ մերժված հայտերի և Ընթացկարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ.

9.1. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և SOFAEXPORT-ի կողմից ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված, քանի որ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և SOFAEXPORT-ի կողմից՝ աճուրդն ամփոփվելու պահին ներկայացված գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գնման գինը:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչված Simsom-ի հայտը մերժվել է՝ սույն արձանագրության 8.1 կետով կայացված որոշմամբ:

9.2. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

9.2.1. Հայտ ներկայացրած մյուս մասնակիցների՝ «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ–ի, «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի, «Կոնսէլ» ՍՊԸ–ի և ԱՁ Նարեկ Սաղյանի հայտերը մերժել:

9.2.2. Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

_____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Նորայր Աղամալյան

_____ Վարդան Կարապետյան

_____ Կարեն Կարապետյան

Քարտուղար՝

_____ Մարիամ Հայրապետյան